



**«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵԶ
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ**

№ 003 03 սեպտեմբերի 2020թ

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջ ՍՊԸ-ի
Ընդհանուր ժողովի 2020թ. սեպտեմբերի 3-ին առցանց ձևաչափով տեղի ունեցած թիվ 3
նիստի**

Ք.Երևան

Առաջնորդվելով «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջ ՍՊԸ-ի կանոնադրության 7.3 կետի «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի հիմնադիր Մ.Նանյանի հրավերով տեղի ունեցավ Քոլեջի Ընդհանուր ժողովի հերթական նիստը:

Քոլեջի Ընդհանուր ժողովի աշխատակարգի 5 կետի առաջին ենթակետի համաձայն՝ Ընդհանուր ժողովի նախագահ՝ Մ.Նանյանը բացելով նիստը, նախ ողջունեց բոլոր մասնակիցներին, շնորհավորեց նոր ուսումնական տարվա մեկնարկի կապակցությամբ և քվեարկության դրեց նիստի օրակարգը.

1. «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի ֆինանսատնտեսական հարցերի, 2020թ.-ի հունվար-օգոստոս ամիսների բյուջեի կատարողականի մասին:

(Ձեկուցող՝ Հաշվապահ՝ Ս.Հովակիմյան):

2. «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի 2020-2021 ուստարվա հաստիքացուցակի և «Հաստիքացուցակում ներառված պաշտոնների նկարագրերը (անձնագիր)» հաստատելու մասին:

**(Ձեկուցող՝ ՄՌԿ և Ընդհանուր բաժնի վարիչի պարտականությունները կատարող,
հաշվապահ՝ Ս. Հովակիմյան):**

3. «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի 2019-2024թթ. ՌԶԾ-ի ընթացքի մասին:

(Ձեկուցող՝ Տնօրեն՝ Ի. Վարդանյան):

1. Լսեցին. Հաշվապահ՝ Ս.Հովակիմյանի ելույթը «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի ֆինանսատնտեսական հարցերի, 2020թ.-ի հունվար-օգոստոս ամիսների բյուջեի կատարողականի վերաբերյալ:

Ս.Հովակիմյանը ներկայացրեց 2020թ. բյուջեի կատարողականը (հունվար-օգոստոս ամիսների) նշելով, որ այս հարցը մասնակի քննարկվել է նաև Ընդհանուր ժողովի նախագահ Մ.Նանյանի հետ: Ինչևիցե, ամփոփ տեղեկատվությունը նա ներկայացրեց, հավելելով, որ բյուջով նախատեսված ծախսերը հիմնականում կատարված են (հիմք՝ 2020թ. կատարողական): Հաջորդիվ, Ս.Հովակիմյանը նշեց, որ 2020թ. բյուջեի համալրումը իրականացվել է ոչ ամբողջական, ուսման վարձերի գանձման ընթացքը և արդյունքները այդքան էլ գոհացուցիչ չեն: Ուսանողների որոշ մասի մոտ առկա են ուսման վարձավճարների պարտքեր: Նման պատկերը ֆինանսական միջոցների հավաքագրման տեսանկյունից ռիսկային են:

Ինչ վերաբերում է բյուջեով նախատեսված որոշ խնայողություններին, ապա առաջարկեց 2021 թվականի բյուջեի նախահաշվի նախագծում «Զարգացման ֆոնդ» հոդվածի 15%-ը ավելացնել ևս 5%-ով:

Հիմնավորելով նման առաջարկը, Ս.Հովակիմյանը մեջբերում կատարեց Քոլեջի 2019-2024թթ. ՌԶԾ-ի նապատակ 3-ի 6-րդ կետը: Պլանավորված ավելացումներով մինչև ՌԶԾ-ի ավարտը Քոլեջի «Զարգացման ֆոնդի» բյուջեն կհասնի մոտավորապես 30%-ի:

Եզրափակելով ելույթը, Ս.Հովակիմյանը ներկայացրեց ՈԱ պատասխանատուի առաջարկով և իր կողմից մշակված «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջ ՍՊԸ-ի «Ֆինանսների տնօրինման քաղաքականության» նախագիծը հաստատման:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Տնօրեն Ի.Վարդանյանը իր ելույթում նշեց, որ համաձայն ՌԶԾ-ի նախատեսվում է համալիր միջոցառումներ Քոլեջի ֆինանսական միջոցների կայունության ապահովման ուղղությամբ, մասնավորապես՝ օտար լեզվով առնվազն մեկ կրթական ծրագիր իրականացման և օտարազգի դիմորդների ներգրավվումը մնում է ռազմավարական գերակա նպատակ: Շարունակելով ելույթը, Ի.Վարդանյանը նշեց, որ Ս.Հովակիմյանի կողմից ներկայացրած փաստաթղթին ծանոթացել է և համաձայնեցվել է Ընդհանուր ժողովի նախագահ՝ Մ.Նանյանի հետ: Առաջարկեց հաստատել:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Քոլեջի 2020 թվականի բյուջեի կատարողականը գնահատել բավարար:

2. Հաստատել «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջ ՍՊԸ-ի «Ֆինանսների տնօրինման քաղաքականության» նախագիծը:
3. Հանձնարարել Քոլեջի տնօրեն՝ Ի.Վարդանյանին Ընդհանուր ժողովի հաջորդ նիստին ներկայացնել ուսման վարձերի հավաքագրման բարելավման պլան:

2. Լսեցին. Քոլեջի ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչ՝ Ա.Գյոզայանի ելույթը «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի 2020-2021 ուստարվա հաստիքացուցակի և «Հաստիքացուցակում ներառված պաշտոնների նկարագրերը (անձնագիր)» հաստատելու վերաբերյալ:

Բաժնի վարիչ՝ Ա.Գյոզայանը իր ելույթում նախ ներկայացրեց 2020-2021 ուստարվա դասախոսական տարիֆիկցիայի հաստիքացուցակի նախագիծը: Նա նշեց, որ այս ուստարում դասախոսական կազմում լուրջ փոփոխություններ չեն եղել: Ընդամենը 9 դասախոսներ դուրս են եկել աշխատանքից, նրանց փոխարեն ընդունել ենք համապատասխան դասախոսներ: Շարունակելով ելույթը Ա.Գյոզայանը ներկայացրեց ՈԱ պատասխանատուի հետ համատեղ և ՀՀ Կառավարման ակադեմիայի Որակի ապահովման կենտրոնի ղեկավար՝ Գայանե Հովհաննիսյանի աջակցությամբ մշակված քոլեջի «Հաստիքացուցակում ներառված պաշտոնների նկարագրերի (անձնագրի)» նախագիծը: Նշեց նաև, որ նախագիծը ամբողջովին համապատասխանում է ՄՄՈՒՀ-ի ՀՀ ՊԿԶ-ով ներկայացված նվազագույն պահանջներին: Եզրափակիչ խոսքում, Ա.Գյոզայանը ներկայացրեց Տնօրինական խորհրդի 30.08.2020թ. նիստի արձանագրությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Ընդհանուր ժողովի նախագահ՝ Մ.Նանյանը իր ելույթում նշեց, որ Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացին ընդառաջ խիստ անհրաժեշտ է հիմնովին բարելավել Քոլեջի կառավարման համակարգը, այս փաստաթուղթը ևս հանդիսանում է ներքին նորմատիվ իրավական ակտ, որն անհրաժեշտ է կառավարման համակարգի բարելավման համար:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Ղեկավարվելով «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի Ընդհանուր ժողովի աշխատակարգի 7-րդ կետի 2-րդ ենթակետով՝ Հաստատել 2020-2021 ուստարվա հաստիքացուցակի նախագիծը:
2. Ղեկավարվելով «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի Ընդհանուր ժողովի

աշխատակարգի 7-րդ կետի 2-րդ ենթակետով՝ Հաստատել «Հաստիքացուցակում ներառված պաշտոնների նկարագրերի (անձնագիր)» նախագիծը:

3. Հանձնարարել ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչ՝ Ա.Գյոզայանին 2021-2022 ուստարվանից առաջնորդվել հաստատված պաշտոնների նկարագրերով:

4. Հանձնարարել Տնօրեն Ի.Վարդանյանին այս գործընթացի վերահսկողությունը իրականացնել անձամբ:

3. Լսեցին. Տնօրեն Ի.Վարդանյանի ելույթը «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի 2019-2024թթ. ՌԶԾ-ի ընթացքի վերաբերյալ:

Տնօրեն Ի.Վարդանյանը հակիրճ ներկայացրեց 2019-2024 թթ. ՌԶԾ-ի պլան ժամանակացույցով կատարված աշխատանքները, համաձայն հաստատված վերջնարդյունքների: Ամփոփելով ելույթը, Ի.Վարդանյանը ներկայացրեց ԳԱՑ-ին համապատասխան 2019-2020 ուստարվա աշխատանքների վերաբերյալ կատարողական զեկույցը (զեկույցը կցվում է):

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաղորդումն ընդունել ի գիտություն:
2. Տնօրեն Ի.Վարդանյանի կատարողական զեկույցը գնահատել բավարար:

Նախագահ՝

Մ.Նանյան

Քարտուղար՝

Հ.Գրիգորյան